<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԳԵՏԵՐԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

(Գետերի հունների և ափամերձ տարածքների մաքրում)

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրի շրջանակներում

Առաջարկվում է ժամանակավոր, վճարովի հիմքունքներով աշխատանք (գետերի ափամերձ տարածքների մաքրում և թափոնների տեսակավորում) **Գեղարքունիքի մարզի Սարուխան, Գանձակ, Գավառ, Նորատուս, Կարմիրգյուղ, Ն. Գետաշեն, Մարտունի, Արծվանիստ** համայնքների 16-ից բարձր տարիքի բնակիչներին, ովքեր մեծապես տուժել են համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից: Աշխատանքներն համակարգում են ԳՄՀԸ-ն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը: Ծրագիրն իրականացնող տեղական գործընկերներն են «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ՀԿ-ն, «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» (ISSD), «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունները:

<u>ԿԱՆԱՆՑ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻՆ ՈՂՋՈՒՆԵԼԻ Է:</u>

Աշխատանքների իրականացման ժամկետը **հոկտեմբերի 10-30-ն** ընկած ժամանակահատվածն է, որի ընթացքում նախատեսվում է ներգրավել շուրջ 250 մասնակից՝ օրական 5-ժամ աշխատանքային գրաֆիկով: Յուրաքանչյուր համայնքում աշխատանքները տևելու են առավելագույնը 3-7 օր (կախված գետի աղտոտվածությունից):

Աշխատանքներին ներգրավելու հիմքը ***քաղաքացիա-իրավական պայմանագիրն*** է, իսկ վճարումը կատարվելու է միայն ***բանկային փոխանցումով:*** Մեկ օրվա մաքրման աշխատանքի ծառայության արժեքը՝ **ներառյալ ՀՀ կիրառելի հարկերը և այլ վճարային պարտավորությունները, կազմելու է 10,000 *(տասը հազար) ՀՀ դրամ:***

Ծրագրի մանրամասները և վճարման կարգը ներկայացված են կից Տեղեկատվական թերթիկում: Մինչ աշխատանքները սկսելը մասնակիցների համար կկազմակերպվի բնապահպանական և իրազեկման

դասընթաց, որին մասնակցությունը պարտադիր է, և որի ընթացքում կներկայացվեն աշխատանքային ուղեցույցն ու հիմնական կանոնները:

Աշխատանքների ընթացքում կտրամադրվի ջուր, ռետինե կոշիկներ և ձեռնոցներ (մեկ զույգ): Յուրաքանչյուր մասնակից պետք է իր հետ ունենա սնունդ և դաշտային աշխատանքներին համապատասխան հագուստ:

Յուրաքանչյուր համայնքում աշխատանքների իրականացմանը կաջակցեն ծրագրի իրականացման թիմը, համայնքային իշխանությունների, ավագանու ներկայացուցիչները:

<u>ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ հոկտեմբերի 13-ն է /հայտի ձևը կցվում է/</u>

Եթե հետաքրքրված եք ծրագրով, ապա կարող եք ներկայանալ ձեր համայնքապետարան, գրանցվել՝ տրամադրելով անձնագրային և սոց քարտի տվյալներ, հասցե, հեռախոսի համար և էլ. հասցե կամ **լրացնել առցանց հայտը** https://bit.ly/3mlKpeh:

Հարցերի դեպքում կարող եք նամակ ուղարկել info@blejan.org էլեկտրոնային հասցեին, իսկ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել «Բլեջան» ՀԿ-ի գրասենյակ՝ հետևյալ հեռախոսահամարով. +374 77 764641:

Հայտը բավարարելու դեպքում, մինչև 5 օրվա ընթացքում, դիմողը կստանա տեղեկատվություն՝ աշխատանքների իրականացման պայմանագրի կնքման ամսաթվի, ժամի, վայրի վերաբերյալ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում» ծրագրի նպատակն է **աջակցել ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը, որն ուղղված էր ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը** և ապահովել դրա շարունակելիությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում: **Ծրագիրը կտրամադրի ժամանակավոր աշխատանք և աշխատանքի դիմաց եկամուտ այն մարդկանց, ովքեր մեծապես տուժել են համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից՝ միաժամանակ լուծելով բնապահպանական խնդիրներ:**

Վերոնշյալ ծրագրով մայիս-հունիս ամիսներին իրականացվել են աշխատանքներ Գեղարքունիքի մարզի 10 համայնքներում (Խաչաղբյուր, Լուսակունք, Կարճաղբյուր, Արծվանիստ, Վարդենիկ, Մարտունի, Գեղհովիտ, Ն.Գետաշեն, Լիճք, Ծակքար): Մաքրման աշխատանքների ընթացքում հավաքվել է շուրջ 230 տոննա աղբ, որից վերամշակելին՝ 283 կգ-ը տեղափոխվել է վերամշակման գործարան:

Գետերի ափամերձ տարածքների վերականգնման նպատակով ծրագիրը բացի գետաբերաններում և գետերի առափնյա հատվածներում մաքրման և թափոնների տեսակավորման աշխատանքներից նաև ներառում է ուռենիների տնկում Գեղարքունիքի մարզի Սևանա լիճ հոսող գետերի ափամերձ տարածքներում, որը հնարավորություն կընձեռի տեղի բնակիչների շրջանում բացահայտել նոր եկամտի

աղբյուրներ: Ծրագիրը նաև դրական ազդեցություն կունենա կենսաբազմազանության, լանջերի պաշտպանության և ջրի որակի վրա: